

պահպանութիւն ընեն եւ դիտեն յունաց ամեն շարժումները. ինք հեծաւ իւր ձին անանին ամեն կողմը պտոյտ մ'ընելէն՝ թաղապետները տեսնելէն եւ զգոյշ կենալու խորհուրդ տալէ վերջ՝ դարձաւ տուն հանգչելու համար այն երկար աւուր քաջած մտաւոր ու մարմնաւոր աշխատանքէն:

Առաւօտեան կոչնակին ձայնին ելաւ Չաւեն երթալու եկեղեցի: Յունաց համար՝ որ անագակութիւնը թողած հիւր էին հիմա՝ նախաճաշ պատրաստեցին կանայք: Մատղաշ տղայք անկասկած իրենց խաղալուն զբաղած էին: Արփենի, որ քսանչորս ժամուան միջոցին մէջ ամենուն հետ բարեկամ եղած՝ էր, երբ Չաւենն տեսաւ եկեղեցիէ դարձած, դիմեց իրեն հարցնելու թէ՝ «Մայրիկը բերի՞ր», իսկ Չաւեն, որ որոշած էր սիրակայսնելուտղայն Կամսարականաց ամրոցը, «Ես քեզ մայրիկին պիտի տանիմ, սիրուն Արփենիս» ըսաւ, եւ նա այն գաղափարով միտքարուած՝ ներս, դուրս, պարտեզը, փողոցը կը շրջագայէր. երբեմն մտնելով սենեակը, ուր յոյն իշխանը եւ Չաւեն նստած էին: Ամեն բան յայտնի կ'ընէր հոռոմին, որ այդ տղայն բացի դիմաց գեղեցկութենէն՝ թէ իր զարդերուն եւ բեհեզեայ զգեստներուն, թէ իր մորթի ճերմկութեան, թէ ոտքերուն ձեռքերուն մանրութեան, թէ իր համարձակութեան համար տարբերութիւն մը ունէր ուրիշ տեսած տղոցմէն: Ազնուականութեան կնիքը ճակտին վրայ դրոշմուած էր, եւ որ իրեն անելի հաճելի էր, յունարէն նաեւ եւ կը խոսէր, վասնզի նախարարական տունէր ինչպէս երբեմն պարսկերէն՝ նոյնպէս յունարէն խօսելու սովորութիւն մտած էր ժամանակներէ ի վեր եւ շատ պալատներու մէջ յոյն ուսուցիչներ եւ դայակներ կը գտնուէին: Չանագան խօսակցութիւններէ իմացաւ նաեւ թէ որք աղջիկ մ'է, ուստի անզգամ խորհուրդ մը յղացաւ մտքին մէջ, եւ երբ բոլոր անանը զբաղած՝ ամեն ոք կէս անագակ, կէս զինուոր յունաց վրայ ուշադրութիւն կը դարձնէր, յոյն իշխանը Արփենիի հետ կզբօսնուր, կը խոսէր, կատակներ կ'ընէր եւ յանկարծ երբ մէկ միջոց մը մենակ էր իր երկու սպասաւորաց հետ, տղան պառկեցուցին. բերանը թաշկինակ մը խցկեց՝ լաւ մի փաթաթեց, որ չի կարենայ շարժիլ եւ պարկի մը մէջ դնելով՝ իրեն ուրիշ կարասեաց պէս իւր ծառայից մէկուն շալակը տուաւ եւ ինք ձի հեծնելով արտորնօք, քիւզանդական ծիծաղով Չաւենն ու կաղզուանցիք ողջունեց եւ Բասեան գաւառի ճամփան ինկաւ: Երբ անանէն դուրս ելաւ, հինգ-վեց ձիաւոր իւր սպասաւորներէն հետը, քանի մը վայրկեան սաստիկ արշաւանքով հեռացաւ իւր փախստական գունդէն. ան ատեն հանեցին խեղճ տղեկը իւր սոսկալի պարկէն, տեսան, որ մօտ էր խեղդուելու, հանեցին բերնի խցիկը, եւ թէպէտ մարած եւ ինքզինքէն ելած՝ բայց իշխանը առաւ նժոյգին վրայ, կը քշէր կատաղութեամբ, երբ գիւղ կը հասնէր՝ իւր լայն վերարկուին տակ ծածկած խեղճ որբը կ'անցնէր արագութեամբ, որպէսզի այս սոսկալի գողութեան հետք մը չի ձգէ: Վերջապէս ամայի տեղ մը ջուրի մը քով իջաւ ձիէն, տղուն քիչ մը ջուր